Հավելված 2
ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի
01.12.2022 թվականի N 133-Լ որոշման

ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻՄՈՐԴԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի
Ընդունելության հանձնաժողովին

_____
Անուն, հայրանուն, ազգանուն

_____
Հաշվառման հասցե

_____
Հեռախոսահամար

_____
Էլեկտրոնային հասցե

ԴԻՄՈՒՄ
(հեռավար եղանակով ուսուցման դիմորդի)

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) կողմից հայտարարված ընդունելության քննություններին՝ որպես **հեռավար (դիստանցիոն, առցանց) եղանակով ուսուցման դիմորդ**:

Ընդունելության քննությունները հանձնելու և ընդունվելու դեպքում՝ ուսուցմանը մասնակցելու նպատակով ընտրում եմ հետևյալ մասնագիտացումը՝

_____
նշել՝ (1) քրեաիրավական կամ (2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական)

Ծանոթացել եմ ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրությանը (24.11.2022թ. գրանցված խմբագրությամբ), ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի 30.11.2022թ. թիվ 13/6-Լ

որոշմամբ հաստատված Ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգին, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի որոշմամբ հաստատված՝ ընդունելության գործընթացի ժամանակացույցին, Ընդունելության հանձնաժողովի գործունեության կարգին:

Հավաստում եմ, որ համակարգչից օգտվելու իմ գիտելիքները (առնվազն՝ MS Word, Excel, PowerPoint) բավարար են ընդունելության քննություններին մասնակցելու, ինչպես նաև ընդունվելու դեպքում՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայում ուսուցում անցնելու համար:

Տեղեկացված եմ, որ ընդունելության գրավոր քննության ընթացքը (այդ թվում՝ համակարգիչները) տեսանկարահանվելու և տեսաձայնագրվելու է, գրավոր քննության ընթացքն առցանց (օնլայն (on-line)) հեռարձակվելու է, իսկ քննական սրահներում և դրան հարակից տարածքներում կարող է տեղադրված լինեն տեխնիկական միջոցների խլացուցիչ սարքեր:

Հավաստում եմ, որ հայերենին տիրապետող գործունակ ֆիզիկական անձ եմ և իմ մասով առկա չեն «Փաստաբանության մասին» օրենքի 45.6-րդ հոդվածով սահմանված ունկնդրի կարգավիճակը բացառող պայմանները:

Իրազեկված եմ, որ ընդունելության քննության գործընթացից բխող հարցերով ծանուցումները, որոշումները և այլ փաստաթղթերը (այդ թվում՝ շտեմարանը) տեղադրվելու են ՀՀ փաստաբանական ակադեմիայի կայքէջում (www.advocates.academy) կամ ուղարկվելու են սույն դիմումի մեջ իմ նշած էլեկտրոնային հասցեին, ինչը համարվելու է պատշաճ ծանուցում:

Հատուկ (օժանդակ) հարմարությունների կարիք ունենալու դեպքում նշե՛լ կարիքի բնույթը:

Դիմումին կից ներկայացնում եմ՝ (շրջանակի վրա կատարել նշում՝ V)

- սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ.
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
- 3x4 չափի լուսանկար.
- բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի պատճենը **կամ** բուհից տրված տեղեկանքի բնօրինակը (**ընդգծել ընտրված տարբերակը**).
- ընդունելության քննության մասնակցության վճարի անդորրագրի պատճենը կամ վճարից ազատելու մասին դիմումը.
- դատվածության վերաբերյալ տեղեկանքը **կամ** նշված տեղեկանքը ստանալու մասին լիազորագիրը (**ընդգծել ընտրված տարբերակը**).
- տեղեկանք առ այն, որ հեռավար դիմորդը վերջին մեկ տարին, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից առնվազն 70 (յոթանասուն) կմ հեռավորության վրա է փաստացի բնակվում (եթե հաշվառման հասցեն տարբերվում է փաստացի բնակության վայրի հասցեից).
- այլ փաստաթղթեր (նշե՛լ).

_____
_____
_____:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը ՀՀ փաստաբանական ակադեմիան ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների արժանահավատությունը պարզելու նպատակով անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել պետական և ոչ պետական մարմիններին (կազմակերպություններին) և ստանալ դրանց պատասխանները, այդ թվում՝ ինձ վերաբերող անձնական տվյալները:

_____ «_____»_____202___թ.
(ստորագրություն) (օր,ամիս, տարեթիվ)